«Դերձակի դասը» Հայկական ժողովրդական հեքիաթ

Լինում է, չի լինում, մի կամակոր թագավոր է լինում։ Եվ մի օր սա կանչում է իր երկրի բոլոր դերձակներին և հրամայում է իր համար մի այնպիսի վերմակ կարել, որ համապատասխանի իր հասակին ոչ երկար լինի, ոչ կարճ։ Ոչ մի դերձակ չի կարողանում թագավորի հրամանը ճիշտ կատարել. բոլորի գլուխներն էլ կտրել է տալիս։

Օրերից մի օր թագավորի մոտ մի դերձակ է գալիս։

Թագավորն ապրած կենա, ¾ ասում է նա, -— ես քո ուզած վերմակը կկարեմ։ Ոչ երկար կլինի, ոչ կարճ։

Լա՛վ, — ասում է թագավորը, — իսկ եթե մի փոքր երկար կամ կարճ եղավ, իմացած լինես գլուխդ կտրել կտամ։

— Համաձայն եմ, թագավորն ապրած կենա, թե չկարողացա՝ գլուխս կտրիր։

Դերձակը գնում է մի վերմակ կարում, դիտմամբ էլ մի քիչ կարճ է անում։ Տանում է դնում թագավորի առաջ, իսկ փեշի տակ էլ մի ճիպոտ է պահած լինում։

— Թագավորն ապրած կենա, ¾ ասում է դերձակը՝ գլուխ տալով, — քո ուզած վերմակը կարել եմ։ Տես, կհավանե՞ս։

— Տեսնենք հասակիս հարմա՞ր է, թե ավել-պակաս է, — ասում է թագավորն ու պառկում թախտին, վերմակը քաշում է վրան։ Վերմակը հազիվ ծնկներին է հասնում, ոտները լրիվ բաց են մնում։ Դերձակն իսկույն փեշի տակից հանում է ճիպոտը և խփում թագավորի ոտքերին։ Թագավորն անմիջապես ոտքերն իրեն է քաշում, թաքցնում վերմակի տակ։

— Թագավորն ապրած կենա, — ասում է դերձակը,— ոտքը իր վերմակի համեմատ պետք է մեկնի։

Կամակոր թագավորը, երբ լսում է դերձակի խելացի խորհուրն այլևս ոչինչ չի կարողանում ասել, նույնիսկ մեծամեծ նվերներ է տալիս իմաստուն դերձակին և ճանապարհ դնում։